Արձանագրություն N 3
բժշկական սարքավորումների ձեռքբերման «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/321» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

01.09.2022թ.
Ժամը՝ 14:30

Մասնակցում էին
Նիստը նախագահող՝ Ա. Զոհրաբյան
Հանձնաժողովի անդամ Տ. Սարգսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան
Բացակայում էր հանձնաժողովի նախագահ՝ Յ. Ասատրյան

1. Ընթացակարգի շրջանակներում 30.08.2022 թվականին ներկայացված հարցմանը պարզաբանում տրամադրելու վերաբերյալ

1.1 Հաշվի առնելով հանձնաժողովի նիստին նախագահի մասնակցության անհնարինությունը՝ նիստը նախագահել է ըստ հանձնաժողովի կազմում ընդգրկման առաջնահերթության նախագահի թեկնածուից հետո նշված՝ նիստին ներկա հաջորդող թեկնածուն՝ Ա. Զոհրաբյանը:

1.2 «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/321» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացվել է հետևյալ հարցումը.

Հարցադրում.

«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/321 մրցույթի 2-րդ չափաբաժնով պահանջվող թվային շարժական ռենտգեն համակարգի բնութագրում առկա է անճշտություն կախված գեներատորի հզորության և գեներատորի ներկառուցված մարտկոցով աշխատելու ձևակերպումների միջև: Ուզում ենք նշել, որ տվյալ համակարգերի արտադրության մեջ երկարամյա փորձ ունեցող ընկերությունների գերակշիռ մասը չունեն միևնույն ժամանակ 4 կամ 5Կվտ հզորությամբ սնուցման աղբյուր, որը իր հերթին գործարկվում է սեփական մարտկոցների օգնությամբ: Այն համակարգերը, որոնք ունեն ներկառուցված մարկտոցներ, հզորությունը սահմանափակվում է հիմնականում մինչև առավելագույնը 2կՎտ: Սակայն այդ սեգմենտի համակարգերը ունեն շատ սահմանափակ կիրառություն, և որոնց ցածր հզորության գեներատորը թույլ չի տալիս իրականացնել բոլոր օրգան համակարգերի պատշաճ որակով ռենտգեն սկանավորում: Խնդրում ենք խմբագրել և հեռացնել գեներատորի ներկառուցված մարտկոցով աշխատելու վերաբերյալ պահանջը, քանի որ հրավերի պայմանների համակարգային և միաժամանակյա կիրառության դեպքում այն առաջացնում է տեսական հակասություն և գործնականում կիրառման գրեթե անհնարինություն:»

Պարզաբանում.

Հաշվի առենելով ներկայացված հարցադրումը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգի հրավերում կատարել համապատասխան փոփոխություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 2, դեմ - 0:

Նիստը նախագահող՝ _____ Ա. Զոհրաբյան

Հանձնաժողովի անդամ՝ _____ Տ. Սարգսյան

Քարտուղար՝ _____ Ա. Համբարձումյան